ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԵՆԵՄՇՅԱՆ Ա. Ռ.

Տեղեկատվական անվտանգության խնդիրը, պայմանավորված հասարակության կենսագործունեության ամենատարբեր ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային գործընթացների վրա տեղեկատվության ազդեցության աճի օրեցօր ավելի ու ավելի արագ տեմպերով, արդիական է դարձել ամբողջ աշխարհում: Համաշխարհային հանրությունը միջազգային տեղեկատվական անվտանգությունը դասում է կարևորագույն հիմնախնդիրների շարքին, այն համարում աշխարհի բնակչության անվտանգ գոյության անհրաժեշտ պայման: Սա, միևնույն ժամանակ, ազգային անվտանգության ինքնուրույն բնագավառ է՝ կոչված պաշտպանելու երկրի տեղեկատվական միջավայրը, տեղեկատվության ձևավորման, տարածման, օգտագործման համակարգերը՝ դրանք ուղղորդելով ի շահ քաղաքացու, պետության, հասարակության:

Միջազգային հեղինակավոր կազմակերպությունները, գիտակցելով միջազգային կայունությանը սպառնացող վտանգը, վաղուց ներգրավված են տեղեկատվական միասնական քաղաքականության մշակման գործում. ՄԱԿ-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Եվրոմիությունը, Եվրոխորհուրդը, ԵԱՀԿ-ն մշակում են մի շարք միջազգային իրավական ակտեր, փաստաթղթեր ու բանաձևեր, խնդրի վերաբերյալ կազմակերպում գիտաժողովներ ու սեմինարներ: Դրանց մի մասը վերաբերում է տեղեկատվական ոլորտին ընդհանուր առմամբ, սակայն տեղեկատվական անվտանգության խնդիրը ևս ուղղակի կամ անուղղակի կերպով բավական մեծ տեղ է զբաղեցրել այդ փաստաթղթերում[1]: Տեղեկատվական անվտանգությանը վերաբերող միջազգային մակարդակով իրականացվող ծրագրերին Հայաստանը, իհարկե, մասնակցում է, սակայն գործնականում դրանց արդյունքը երևում է միայն այնքանով, որքանով այստեղ կազմակերպվում են սեմինարներ ու քննարկումներ խնդրի վերաբերյալ:

ՀՀ տեղեկատվական համակարգը բավարար պաշտպանված չէ ո՛չ արտաքին և ո՛չ էլ ներքին ազդեցություններից: Դրա վկայությունն են այլ-

---

[1] Տե՛ս *Достижения в сфере информатизации и телекоммуникации в контексте международной безопасности. Резолюция 55/28, принятая Генеральной Ассамблеей ООН, 2000; Роль науки и техники в области международной безопасности и разоружения, резолюция A/RES/55/29, принятая Генеральной Ассамблеей ООН по докладу Первого Комитета по разоружению и международной безопасности, 2000; Вопросы, касающиеся информации. Информация на службе человечества. Резолюция A/RES/55/136A, принятая Генеральной Ассамблеей ООН по докладу Комитета по специальным политическим вопросам и вопросам деколонизации (Четвертый Комитет), 2001; Декларация об основных принципах, касающихся вклада средств массовой информации в укрепление мира и международного взаимопонимания, в развитие прав человека и в борьбу против расизма и апартеида и подстрекательства к войне, ЮНЕСКО, 1978; ЮНЕСКО и информационное общество для всех, документ, принятый ЮНЕСКО, 1996; Европейская конвенция о трансграничном телевидении, Совет Европы, 1989.*

ազգի հակերների պարբերական հարձակումները հայկական կայքէջերի վրա, թուրքական, ադրբեջանական տարակերպ դրսևորված տեղեկատվական գրոհները, հայկական լրատվամիջոցների կողմից իրականացվող հաճախ ոչ հայանպաստ քաղաքականությունը. երբեմն դրանք գործում են պարզապես ի վնաս հայերի, անտեղի հղումներ են արվում ադրբեջանական, մեղմ ասած, խեղաթյուրված աղբյուրներին, տպագրվում են հակահայկական միտումներով հոդվածներ, երբեմն վարկաբեկվում, պախարակվում կամ քննադատության է ենթարկվում հայկական ավանդական մտածելակերպը: Դրան հակառակ, Հայաստանում համակարգված աշխատանք չի տարվում մեծ կարևորություն ունեցող իրողությունները մեր երկրի համար բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու, արտերկրում Հայաստան երկրի անունն ու վարկը բարձրացնելու ուղղությամբ: Մինչդեռ, սրան զուգահեռ, ահռելի թափով իրականացվում է իդեալական Արևմուտքի քարոզչությունը, լայնորեն քարոզվում են արևմտյան ապրելա-կերպն ու մտածելակերպը. ցանկացած բնագավառում արված քայլերի իրավացիությունն ապացուցելու համար ներկայացվում են դրանց առընչություններն ու զուգահեռները արևմտյան համապատասխան համակարգի հետ, ինչն ինքնին վերածվում է արևմտյան արժեքների գովազդի, ենթագիտակցության մեջ պատկերացում է ձևավորում դրանց միանշանակ ճշմարտացի լինելու մասին, որոշակի անվստահություն է առաջացնում սեփական մեթոդների, հայկական գիտական ներուժի հանդեպ: Նաև այս գործոններն են, թերևս, խթանում մեր երկրում առկա զանգվածային արտագաղթն ու լայն տարածում ստացող արևմտամետ մտածողությունը:

Չպետք է մտածել, թե հայերս խնդիր ունենք պաշտպանվելու միայն թուրքական կամ ադրբեջանական տեղեկատվական հարձակումներից: Գերտերությունները վաղուց արդեն լրջորեն զբաղվում են համաշխարհային տեղեկատվական տարածքում գերիշխող դառնալու ուղղությամբ, նրանք տեղեկատվությունն օգտագործում են համաշխարհային հանրության գիտակցության վրա ազդելու, այս կերպ աշխարհաքաղաքական, դիվանագիտական առավելությունների հասնելու, այլ երկրների հանդեպ տնտեսական ու քաղաքական գերիշխանություն ունենալու համար: Նպատակի իրականացման ճանապարհին ձեռնարկվում են կոնկրետ քայլեր. ստեղծվում են տեղեկատվական ռազմավարության, համաշխարհային տեղեկատվական-հոգեբանական միջավայրի վրա ներգործության կենտրոններ, անցկացվում են տեղեկատվական պատերազմին նվիրված գիտաժողովներ, քննարկվում են պատերազմական հակամարտություններում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները, մշակվում տեղեկատվական պատերազմներ վարելու, մարդկային գիտակցության հանդեպ տեղեկատվության առավել նպատակային օգտագործման հոգեբանական միջոցներ: Այս ուղղությամբ հատկապես եռանդուն գործունեություն է իրականացնում Միացյալ Նահանգները: Վերը նշված գործողություններին զուգահեռ, 1999-ին այստեղ ստեղծվեց Միջազգային տեղեկատվությամբ զբաղվող գործակալությունը (IPI), որը պետք է համակարգեր ԱՄՆ-ի քաղաքականության քարոզչությունը ուժեղացնելուն ուղղված ջանքերը և հակազդեր արտասահմանում այս պետության հանդեպ բացասական կարծիքի ձևավորմանը: Այսօր տեղեկատվական զենքի (թե՛ հարձակողական և թե՛ պաշտպանողական)մշակում

է իրականացնում աշխարհի մոտ 120 երկիր: Պատահական չէ, որ որոշ առաջավոր երկրների բյուջեներում տեղեկատվական անվտանգության համար նախատեսված ծախսերը տեղ են գտնում զանգվածային ոչնչացման զենքերի կիրառումից պաշտպանվելու համար նախատեսված ծախսերի հետ միևնույն փաթեթում[2]:

Պետությունները, որոնց հետ վիճելի խնդիրներ ունենք, նույնպես անգործ չեն. մինչ հայկական կայքերը, որոնք պետք է որ ողողված լինեին կարևորագույն այնպիսի հարցերի վերաբերյալ տեղեկատվությամբ, ինչպիսիք են, օրինակ, Հայկական հարցը կամ դեռևս լուծում չգտած արցախյան հիմնախնդիրը, պարզապես չեն աշխատում այս ուղղությամբ կամ շատ քիչ են աշխատում, թուրքական կողմն առիթը բաց չի թողնում հակահայկական կեղծ տեղեկատվություն տարածելու համար: Ընդ որում, այս ուղղությամբ աշխատում են ինչպես պետական, այնպես էլ պետության հովանավորչությամբ գործող, բայց տարբեր, երբեմն նույնիսկ օտարերկրյա կազմակերպությունների անունից ներկայացող մի շարք կայքեր (Թուրքիայի կառավարությանը կից Մամուլի և տեղեկատվության վարչության կայքում (*WWW.byegm.gov.tr*) «Armenia» բառը հիշատակվում է մոտ 500, «Karabakh»-ը՝ 100, թուրքերեն «ermeni»-ն՝ 3100 էջերում)[3]: Հայաստանի մասին տեղեկություն փնտրող օտարերկրացին առաջին հերթին կբացի հայկական պետական կայքերը, և գոնե դրանք պարտավոր են աշխատել ի շահ Հայաստանի դիրքորոշման քարոզչության, հայ և օտարերկրացի այցելուներին պարզել իրերի իրական պատկերը: Ընդ որում, պետական կայքէջերով հայամետ տեղեկատվության տրամադրումը նվազագույնն է, որ կարող է անել ՀՀ-ն այս ուղղությամբ: Միամտություն կլինի կարծել, թե այսքանը բավական է մեր հարևանների հանդեպ տեղեկատվական մրցունակության հասնելու համար: Եթե մանավանդ հաշվի առնենք նրանց կողմից այս ուղղությամբ իրականացվող այնպիսի հստակ քայլերը, ինչպիսիք են՝ տարբեր և, հատկապես, Հայաստանի հետ առնչվող երկրների կրթական համակարգում իրենց ներկայության ապահովումը, այդ երկրներում հեղինակավոր հաստատությունների ստեղծման կամ հետազոտական աշխատանքների կազմակերպման քողի տակ թուրքերենի, թուրքական մշակույթի, պատմության և դրանց թուրքական մեկնաբանության տարածումը, թուրքամետ քարոզչության իրականացումը և այլն[4]:

Կարծում ենք՝ ակնհայտ է, որ մեզ նման փոքրիկ պետության համար առանձնապես վտանգավոր կարող են լինել այդ գործընթացները, հատկապես այսօր, երբ համակարգչային տեխնոլոգիաներն ու արբանյակային կապը համաշխարհային տեղեկատվական հասարակության գոյությունը դարձրել են իրականություն՝ էապես մեծացնելով տեղեկատվության կշիռն ու նշանակությունը, այն վերածելով ռազմավարական ու դիվանագիտական հզոր ռեսուրսի, երբ լրատվական ժամանակակից միջոցները

---

[2] **Поляков Ю. А.,** *Информационная безопасность и средства массовой информации, М., 2004, с. 3-14.*

[3] **Վրթանեսյան Կ., Մարտիրոսյան Ս.,** Համացանցը և մենք (Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ե., 2007, էջ 230):

[4] Նույն տեղում, էջ 248-255:

դարձել են աշխարհի բնակչության վրա ներգործելու գաղափարական-քաղաքական հզոր զենք, որի ազդեցության սահմաններն անընդգրկելի են: Չունենալով նպաստավոր աշխարհագրական դիրք և նշանակալի բնական հարստություններ՝ մենք պարտավոր ենք ոչ միայն դեմ կանգնել կամ հակազդել արտաքին տեղեկատվական հարձակումներին, այլև հետևողականորեն օգտագործել այս ռեսուրսը ի նպաստ մեր պետական շահերի: Գործին պետք է լծվեն հայրենական տեղեկատվական համակարգի բոլոր օղակները, հատկապես ԶԼՄ-ը, սփյուռքը, արտերկրում գործող հայկական կառույցները պետք է օգտագործել զանգվածային լրատվության արտասահմանյան միջոցները, համացանցը, փնտրել և գտնել, անգամ ստեղծել այս ուղղությամբ աշխատող նոր մարմիններ:

Այս հարցում անհրաժեշտ են պետության նախաձեռնությունն ու ընդգծված հոգածությունը: Իհարկե, ազգային անվտանգության մարմինները որոշակի քայլեր կատարում են տեղեկատվական հարձակումներից պաշտպանվելու, ոլորտում առկա տեղեկատվական վտանգները նվազագույնի հասցնելու ուղղությամբ, իշխանությունները խոսում են համացանցի կապի բոլորովին այլ, անհամեմատ բարձր որակի ապահովման մասին: Կարծես փորձ է արվում խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը երկրում, սակայն աշխատանքը սկզբունքային բնույթ չի կրում: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերջնական տարբերակը, ունենալով մի շարք առավելություններ, իր տեսադաշտից դուրս է թողել տեղեկատվական ոլորտը, չկա խնդիրը կանոնակարգող, պետության տեղեկատվական բոլոր կառույցների աշխատանքը հաշվի առնող հստակ մշակված քաղաքականություն: Ամենևին մշակված չեն տեղեկատվական հարձակումներից պաշտպանվելու, հայանպաստ գործունեություն ծավալելու մեխանիզմներ, աշխատանքային ծրագրեր[5]:

Այս խնդիրները լուծելու համար նախ և առաջ պետք է համակարգված ներկայացնել ՀՀ տեղեկատվական դաշտում առկա արտաքին ու ներքին սպառնալիքները, որոշել, թե որտեղից են սպասվում այդ վտանգները, այսինքն՝ սահմանել դրանց աղբյուրները, ապա մշակել վերջիններիս դիմագրավման կոնկրետ միջոցներ: ՀՀ արտաքին սպառնալիքներն ավելի քան վտանգավոր կարող են լինել տարածաշրջանային խնդիրներ ունեցող փոքր պետության համար: Դրանց շարքին կարելի է դասել՝

- ՀՀ հաղորդակցային մեկուսացումը,
- Հայաստանի հետ առնչվող խնդիրների լուսաբանումը բացասական լույսի ներքո, դրանց վերաբերյալ ապատեղեկատվության կամ վարկաբեկիչ տեղեկատվության տարածումը,
- Արևմուտքի և նրա արժեքների ընդգծված քարոզչությունը,
- պետական գաղտնիքի բացահայտմանն ուղղված ջանքերը,

[5] Նման երկարաժամկետ աշխատանքային ծրագրեր մշակում են մի շարք պետություններ, օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետության 2004-2007 թթ. եռամյա ծրագիրը [*Plan de renforcement de la sıcurite de systemes d'information de l'e'tat (2004-2007), Republique Francaise, 2004)].*

- համակարգչային հարուցիչների կամ տեղեկատվական տեխնածին այլ զենքերի (օրինակ՝ տրամաբանական ռումբերի)[6] կիրառումը հայաստանյան պետական կամ մասնավոր կառույցների դեմ:

Ներքին սպառնալիքների շարքին կարելի է դասել.

- խոսքի ազատության սահմանափակումը, իրազեկության իրավունքի խախտումը,

- տարբեր կազմակերպությունների կամ պետական մարմինների կողմից ապատեղեկատվության տարածումը:

Սրանք կարող են հանգեցնել ՀՀ միջազգային հեղինակության նվազման, ազգային նկարագրի կորստի, առաջ բերել սոցիալական լարվածություն, կոռուպցիոն երևույթների աճ, իշխանությունների հանդեպ ձևավորել անվստահության մթնոլորտ, նվազեցնել պետության ներսում առկա գործընթացների նկատմամբ հասարակության վերահսկողությունը և այլն:

ՀՀ տեղեկատվական դաշտի արտաքին և ներքին սպառնալիքների քննությունը թույլ է տալիս գոնե մոտավորապես որոշել մեր պետության տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված հիմնական անելիքները: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- ՀՀ քաղաքացին պետք է կարողանա օգտվել տեղեկատվություն ստանալու և օգտագործելու իր սահմանադրական իրավունքից, հասարակության մեջ հայրենասիրական զգացումների արմատավորումը, տնտեսական, մշակութային ու գիտական հայրենական ներուժի հանդեպ վստահություն ձևավորելը, օբյեկտիվ տեղեկատվության տարածումը:

- ՀՀ տեղեկատվության անվտանգության ապահովմանն ուղղված անելիքներից են նաև ՀՀ ինտեգրումը միջազգային տեղեկատվական տարածությանը, միջազգային հանրության համար երկրի տեղեկատվական դաշտի մատչելիության ապահովումը, ՀՀ պետական քաղաքականության, հայ և միջազգային կյանքի կարևոր, նշանակալի իրադարձությունների վերաբերյալ ՀՀ պաշտոնական դիրքորոշման մասին հայ և միջազգային հանրությանը հստակ և որոշակի տեղեկատվության տրամադրումը, ինչը կխանգարի ՀՀ-ի անունից այլակերպ, մեր դիրքորոշումներն ու մոտեցումները խեղաթյուրող տեղեկատվության տարածմանը, միևնույն ժամանակ կհակազդի որոշ ուժերի կողմից տարածվող՝ Հայաստանին առնչվող հաճախ ոչ հավաստի տեղեկատվությանը:

- Անհրաժեշտ է նաև՝

- մեծ ուշադրություն դարձնել հասարակության իրազեկմանը, ՀՀ հեռահաղորդակցական և կապի համակարգերի զարգացմանը,

- գործել պետական տեղեկատվական ռեսուրսների անթույլատրելի հոսքը արգելելու, հեռահաղորդակցական համակարգերի անվտանգության ապահովման ուղղությամբ,

---

[6] Ծրագրային տեղադրման սարքերը, որոնք նախօրոք ներմուծվում են ռազմական կամ քաղաքացիական կառույցների տեղեկատվական կառավարման կենտրոններ, որպեսզի ազդանշանի դեպքում կամ կանխորոշված ժամանակ գործողության անցնեն: Դրանք կարող են խաթարել կառույցի աշխատանքը, ապահովել տեղեկատվության հոսք:

- ստեղծել տեղեկատվական հարձակումներից պաշտպանվելուն, ոլորտում առկա վտանգները նվազագույնի հասցնելուն, հայանպաստ տեղեկատվական քաղաքականությանն ուղղված նորմատիվ իրավական հենք, մշակել երկրի տեղեկատվական անվտանգությունն ապահովող ռազմավարական ուղղություն, որը պայմաններ կստեղծի որոշակի աշխատանքային ծրագրերի մշակման համար,

- պայմաններ ապահովել խնդրով զբաղվող մասնագիտական կառույցների ստեղծման, տեղեկատվական անվտանգության մասնագետների պատրաստման, հայկական ԶԼՄ ոլորտի ներկայացուցիչների հատուկ դասընթացների կազմակերպման համար:

ВОПРОСЫ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ РА

МЕНЕМШЯН А. Р.

Резюме

Иформационная система РА недостаточно защищена как от внешних, так и от внутренних воздействий. Свидетельством тому являются регулярные “вторжения” иностранных хакеров в армянские сайты, турецкие, азербайджанские информационные атаки различной направленности, зачастую непроармянская политика, осуществляемая со стороны армянских средств массовой информации.

Ввиду отсутствия благоприятного географического положения и значительных природных ресурсов мы обязаны не только защищаться или противостоять внешним информационным атакам, но и последовательно использовать данный ресурс во благо наших государственных интересов. К делу должны подключиться все звенья отечественной информационной системы, в особенности СМИ, армянская диаспора, действующие за рубежом армянские структуры. Следует использовать также зарубежные средства массовой информации, “Всемирную паутину”, искать и находить и даже создавать в этом направлении новые органы.